# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 1940 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

355.23
Կ-21

ԵՐԵՎԱՆ — 1940

355.23
Կ-21
Կ
1 MAR 2010
СИГНАЛЬНЫЙ ЭКЗЕМПЛЯР

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 1940 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1940

41.234

17 MAY 2013

Հայերեն թարգմ. խմբագրեցին՝ Վ. Գրիգորյան
Ա. Սարգսյան
Թարգմ. Պ. Պ. Աթայան

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССРА
им. А. Мясникяна

1258
4о

Գլավլիտ Ա.—2084 Պատ. № 116. Տիրաժ 2000.

Պետհամալսարանի Հրատարակչության տպարան, Աբովյան 104, Յերևան

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 1940 ԹՎԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պիոներների և դպրոցականների համամիութենական պաշտպանական մրցումներն անց են կացնում ՀամԼԿՅԵՄ Կենտկոմը, ԽՍՀՄ Պաշը-Ավիաքիմի Կենտխորհուրդը, Կարմիր խաչի և Կարմիր կիսալուսնի գործկոմը, հետևյալ նպատակով.

ա) լայնորեն ծավալել մասսայական պաշտպանական աշխատանքը դպրոցներում, կազմակերպել պաշտպանական խմբակներ, թիմեր, ուսումնասիրել քաղաքացիական կռիվների պատմությունը, ուսումնասիրել Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի առաջնորդների և կազմակերպիչների՝ ընկերներ Լենինի, Ստալինի, Վորոշիլովի, Ֆրունզեյի կենսագրությունները, կազմակերպել զրույցներ Կարմիր բանակի և Ռազմա-ծովային նավատորմի կյանքի և ուսման մասին.

բ) ընդգրկել մաքսիմալ թվով պիոներներ և դպրոցականներ, նախապատրաստելու և հանձնելու «Վորոշիլովյան հրաձիգ», «Պատանի վորոշիլովյան հրաձիգ», «Պատրաստ հակաօդային պաշտպանության», «Պատրաստ յեղիր սանիտարական պաշտպանության», «Պատրաստ 0 սանիտարական պաշտպանության» կրծքանշանների նորմաները.

գ) Ներգրավել մաքսիմալ թվով պիոներներ և դպրոցականներ սովորման մեջ։

## ՄՐՑՈՒՄՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

*Պաշտպանական մրցումներին կարող է մասնակցել 5—10-րդ դասարանների յուրաքանչյուր աշակերտ։*

*Մրցումը տեղի է ունենում երկու խմբով։*

*Առաջին խումբ՝ 5, 6, 7-րդ դասարանների աշակերտները։*

*Երկրորդ խումբ՝ 8, 9, 10-րդ դասարանների աշակերտները։*

*Առաջին խմբի համար մրցումը կազմակերպվում է պաշտպանական աշխատանքի հետևյալ հինգ ձևերից. հրաձգությունից, ՀՈԲՊ-ից, կապից, ռազմական տեղագրությունից և ՊՄՊ-ից։*

Ծանոթություն 1.—*Նռնականետության վարժությունները մտնում են հրաձգության ծրագրի մեջ։*

2. *Կապի և ռազմական տեղագրության վարժությունները կատարում է մեկ թիմ (4 հոգի)։*

*Միջդպրոցական մրցումներում լավագույն արդյունքներ ցույց տված պիոներներից և դպրոցականներից կազմակերպել դպրոցների հավաքական թիմեր 0 բաղկացած 5 հրաձիգից (այդ թվում երեք նռնականետ, երկրորդ խմբի համար), չորս հոգի ՀՈԲՊ-ից, չորս հոգի կապից ու տեղագրությունից և չորս հոգի ՊԱՍՊ-ից։*

*Այս կազմով (34 հոգի՝ 17 առաջին և 17 երկրորդ խմբից) դպրոցական թիմերը մասնակցում են շրջանային մրցումներին։ Այն դպրոցը, որը մրցման որևէ ձևից խումբ չի ներկայացրել, շրջանային մրցումներին մասնակցել չի կարող։*

*Շրջանային մրցումներում ջոկվում են մրցմանը մասնակցողներից նրանք, որոնք հրաձգությունից, ՀՈԲՊ-ից, ՊԱՍՊ-ից, ռազմական տեղագրությունից և կապից առաջին տեղերն են գրավել, և դրանցից կազմակերպվում են հավաքական թիմեր մարզային, երկրային և ավտոնոմ հանրապետության մրցումներին մասնակցելու համար։*

*Հանրապետական մրցումներին մասնակցում են մարզա-*



*յին, երկրային և ավտոնոմ հանրապետությունների մրցումների լավագույն մասնակիցներից կազմված հավաքական թիմերը։*

*Համամիութենական պաշտպանական մրցումներին մասնակցում են յուրաքանչյուր հանրապետությունից առաջին և երկրորդ խմբերի հավաքական թիմերը և մի թիմ երկաթուղային դպրոցներից, հետևյալ կազմով.*

*2 թիմ հրաձիգներ, հնգական հոգի յուրաքանչյուր խմբից,*

*2 թիմ ՀՈԲՊ, չորսական հոգուց,*

*2 թիմ կապի ու տեղագրության, չորսական հոգուց և*

*2 թիմ ՊԱՍՊ, չորսական հոգուց։*

Ծանոթություն.— *Մրցման յուրաքանչյուր տեսակից մեկը պետք է լինի պահեստի։ Համամիութենական մրցումներին հանրապետությունից պետք է լինի 46 հոգի, այդ թվում պետը, թիմի ղեկավարը և երկու մարզիչ։*

*Համամիութենական պաշտպանական մրցումներին յուրաքանչյուր թիմ ներկայանում է իր պետի և ղեկավարի գլխավորությամբ։ Թիմի պետն ու ղեկավարը հաստատվում են միութենական հանրապետության ԼԿԵՄ ԿԿ-ի և Պաշտ-Ավիաքիմի խորհրդի նախագահության կողմից։*

*Միջդպրոցական, շրջանային, մարզային և հանրապետական (բացի ՌԽՖՍՀ) մրցումների լրիվ հաշվետվությունները ուղարկվում են Համամիութենական կազմկոմիտեն, հանրապետական մրցումների վերջանալուց հինգ օր հետո։*

Ծանոթություն.— *ՌԽՖՍՀ միջդպրոցական, շրջանային, մարզային, երկրային և ավտոնոմ հանրապետությունների մրցումների հաշվետվություններն ուղարկվում են Համամիութենական կազմկոմիտեյին, մարզային, երկրային, ավտոնոմ հանրապետությունների մրցումների վերջանալուց հինգ օր հետո։*

## ՄՐՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

1939 թ. դեկտեմբերի 1-ից պիոներական ջոկատներում և դասարաններում ծավալվում են դպրոցական մրցումների նախապատրաստական աշխատանքները. կազմակերպվում են պաշտպանական խմբակներ, վորտեղ նախապատրաստվում են հանձնելու պաշտպանական կրծքանշանների նորմաները, կազմակերպվում են թիմեր, վորոնք մարզումներ են կատարում։ Այս բոլորի հանրագումարը կլինի միջդպրոցական մրցումները առանձին տեսակներից (հրաձգություն, նռնակաձգություն, ՀՈՔՊ, ՊԱՍՊ, կապ և ռազմական տեղագրություն)։

Դպրոցներում, պիոներների հետ պարապելու համար, հրավիրվում են հրամանատարներ և Կարմիր բանակայիններ, մանկավարժներ, ծնողներ, շեֆ-հիմնարկության կոմյերիտականներ։ Մրցումների նախապատրաստության համար տեղի ունեցող բոլոր պարապմունքները, հատկապես հրաձգությունը, պետք է կատարվեն միայն հատուկ պատրաստականություն ունեցող մեծահասակների ղեկավարությամբ։

## ՄՐՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Դպրոցական մրցումներ—1940 թ. մարտի 1—10-ը
2. Շրջանային մրցումներ—1940 թ. մարտի 25-ից—ապրիլի 5-ը
3. Մարզային, յերկրային, ավտոնոմ հանրապետությունների մրցումներ—1940 թ. ապրիլի 20-ից մինչև մայիսի 1-ը։
4. Հանրապետական մրցումներ—1940 թ. հունիսի 25-ից մինչև հուլիսի 5-ը։
5. Համամիութենական մրցումներ—1940 թ. օգոստոսի 1—13-ը։

Մարզային, յերկրային մրցումները կատարվում են հեռակայությամբ։

Շրջկենտրոնից հեռու գտնվող առանձին դպրոցներին



թույլատրվում է մասնակցել շրջանային մրցումներին հեռակայությամբ։

Այն միութենական հանրապետությունները, վորոնք հնարավորություն չունեն բոլոր մասնակիցներին կանչել տեղերը, մրցումները կատարում են հեռակայելով։

ՌԽՖՍՀ-ի մրցումները կատարվում են հեռակայելով։

## ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մրցումները կազմակերպելու և դպրոցական, շրջանային, մարզային ու հանրապետական մրցումներում առաջնությունը վորոշելու համար, կազմակերպվում են կազմկոմիտեներ կոմյերիտական և պրոֆմիութենական կազմակերպությունների, Պաշտ-Ավիաքիմի, Կարմիր խաչի, Կարմիր կիսալուսնի, ժողկրթբաժնի և տեղական մամուլի ներկայացուցիչներից։ Կազմկոմիտեյին կից կազմակերպվում են դատական կոլեգիաներ։ Մրցման յուրաքանչյուր ձևի համար կազմկոմիտեն հաստատում է գլխավոր դատավորներ։

## ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՅԵՎ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Համամիութենական առաջնությունը վորոշվում է ինչպես բոլոր ձևերի կոմպլեքսով, այնպես էլ մրցման առանձին ձևերից։

Ընդհանուր առաջնությունը վորոշվում է օլիմպիադական սիստեմով, այսինքն ըստ առաջին և յերկրորդ խմբերի առանձին մրցումների մեջ գրաված տեղերի գումարի։ Առանձին ձևերի առաջնությունը վորոշվում է նույնպես ըստ վարժությունների մեջ գրաված տեղերի գումարի։

Ընդհանուր կոմպլեքսում համամիութենական.—

Առաջին տեղը գրավող թիմը պարգևատրվում է Պաշտպանության ժողկոմատի փոխանցիկ մրցանակով՝ դրոշակով և 5 հազար ռուբլու թանկարժեք նվերներով։

Երկրորդ տեղը գրավող թիմը պարգևատրվում է

ՀամԼԿՑԵՄ կենտկոմի փոխանցիկ դրոշով և 3 հազար ռուբլու թանկարժեք նվերներով։

Երրորդ տեղը գրավող թիմը պարգևատրվում է Պաշր-Ավիաքիմի կենտխորհրդի և Կարմիր խաչի ու Կարմիր կիսալուսնի գործկոմի մրցանակով՝ սեղանի ժամացույցով և 3000 ռուբլու թանկարժեք նվերներով։

Չորրորդ տեղը գրավող թիմը պարգևատրվում է ՀԱՄԿԽ-ի գավաթով և 2 հազար 500 ռուբլու թանկարժեք նվերներով։

Մրցման առանձին ձևերից առաջին յերեք տեղերը գրավող թիմերը պարգևատրվում են Պաշտպանության ժողկոմատի, ՀամԼԿՑԵՄ կենտկոմի, ՀԱՄԿԽ-ի, Պաշր-Ավիաքիմի կենտխորհրդի և Կարմիր խաչի ու Կարմիր կիսալուսնի գործկոմի մրցանակներով։

Բոլոր վարժություններից, անհատական լավագույն արդյունքների համար, սահմանվում են անձնական մրցանակներ։

---



# ԾՐԱԳՐԵՐ

## ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

### ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 1-ԻՆ ՅԵՎ 2-ՐԴ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**Հրացանը**—*փոքր տրամաչափի* ТОЗ-*8 կամ* ТОЗ-*9։*

**Նշանոցը**—*բաց։*

**Նպատակը**—*թիրախ №6։*

**Հեռավորությունը**—*25 մետր։*

**Փամփուշտները**—*3 փորձնական և 5 քննական։*

**Դրությունը հրաձգության համար**—*պառկած, փակի կիրառումը թույլ է տրվում։*

**Ժամանակը հրաձգության համար**—*անսահմանափակ։*

**Գնահատականը**—*վորոշվում է աչկոների գումարով։*

**Կատարման կարգը**—*դատավորը ցույց է տալիս հրաձգին հրաձգության նպատակը, թիրախն ու տեղը, դատավորի հրամանով հրաձիգը պատրաստվում է հրաձգության, լցնում է հրացանը և կրակ է բաց անում։*

### ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 1-ԻՆ ՅԵՎ 2-ՐԴ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**I վարժություն**

**Հրացանը**—*փոքր տրամաչափի* ТОЗ-*8 կամ* ТОЗ-*9։*

**Նշանոցը**—*բաց։*

**Նպատակը**—*թիրախ № 7։*

**Հեռավորությունը**—*50 մետր։*

**Փամփուշտները**—*3 փորձնական և 5 քննական։*

**Դրությունը հրաձգության համար**—*պառկած, փակի օգտագործումը թույլ է տրվում։*

Ժամանակը հրաձգության համար—անսահմանափակ։
Գնահատականը—վորոշվում է աչկոնների գումարով։
Կատարման կարգը—դատավորը ցույց է տալիս հրաձգին հրաձգության նպատակն ու տեղը. դատավորի հրամանով հրաձիգը պատրաստվում է հրաձգության և կրակ է բաց անում։

### II վարժություն

Հրացանը—ТОЗ-8 կամ ТОЗ-9։
Նշանոցը—բաց։
Նպատակը—№ 9-а, 5 անգամ փոքրացրած։
Հեռավորությունը—50 մետր։
Փամփուշտները—3 փորձնական և 5 քննական։
Դրությունը հրաձգության համար—պառկած, փոկի օգտագործումը թույլ է տրվում։
Ժամանակը հրաձգության համար—փորձնականների համար—անսահմանափակ, քննականների համար—5 րոպե։
Գնահատականը—վորոշվում է աչկոնների գումարով։
Կատարման կարգը—դատավորը ցույց է տալիս հրաձգին հրաձգության նպատակն ու տեղը, դատավորի հրամանով հրաձիգը պատրաստվում է հրաձգության, լցնում է հրացանը և կրակ է բաց անում։

## ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑ ԵՆ ԿԱՑՎՈՒՄ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԱՍԻ ԾՐԱԳՐՈՎ

## *ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

### ԿՐՏՍԵՐ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ

**1-ին վարժություն. հրաձգություն՝ հակագազը հագած**
*(կոմանդային-անհատական)*

Զենքը—փոքրակալիբր հրացան ТОЗ-8 կամ ТОЗ-9։
Նշանոցը—բաց։
Նպատակը—№ 9-а, 5 անգամ փոքրացրած։



Հեռավորությունը—50 մետր։
Փամփուշտները—3 փորձնական և 5 քննական։
Դրությունը հրաձգության համար—պառկած, փոկի օգտագործումը թույլ է տրվում։
Ժամանակը հրաձգության համար—5 րոպե փորձնականների և 5 րոպե քննականների համար։
Գնահատականը—վորոշվում է աչկոնների գումարով։
Կատարման կարգը. դատավորի «գազեր» հրամանով հրաձիգը հագնում է հակագազը և պատրաստվում է հրաձգության համար։ «Գազեր» հրամանից 15 վայրկյան անցնելուց հետո «կրակ» հրաման է տրվում։ Ժամանակը հրաձգության համար հաշվվում է «կրակ» հրաման տալու մոմենտից։ Հակագազը պետք է սահմանված տիպարի լինի, առանց վորևէ փոփոխության ու լրացման. հրաձգությունից առաջ հակագազի ապակիները սրբելն ու յուղելը թույլ է տրվում։

**2-րդ վարժություն. հրաձգություն ըստ խորության**
*(կոմանդային-անհատական)*

Զենքը—փոքրակալիբր հրացան ТОЗ-8 կամ ТОЗ-9։
Նշանոցը—բաց։
Նպատակը—№ 29—պերիսկոպ 75 մետր հեռավորության վրա։
№ 11-а—գլխաչափ 125 մետրի վրա։
№ 9—շրջակտրած 150 մետրի վրա։
№ 9-а— » 200 մետրի վրա։
Փամփուշտները—8։
Դրությունը հրաձգության համար—պառկած, փոկի օգտագործումը թույլ է տրվում։
Ժամանակը հրաձգության համար—10 րոպե։
Գնահատականը—վորոշվում է հարվածած թիրախների քանակով։
Կատարման կարգը. դատավորը հրաձգին ցույց է տալիս հրաձգության նպատակները, տեղը և սեկտորը։ Յերբ հրա-

ձիգը պատրաստվել է հրաձգության, «կրակ» հրաման է տրվում: 10 րոպեից հետո դատավորի հրամանով հրաձգությունը դադարեցվում է: «Ավարտ» հրամանից հետո կատարած ձիգը համարվում է վրիպում և հանվում է հրաձգի տված հետևանքից:

**3-րդ վարժություն. Մենամարտային հրաձգություն**
*(կոմանդային վարժություն)*

Զենքը—*փոքրակալիբր հրացան* ТОЗ-8 *կամ* ТОЗ-9:
Նշանոցը—*բաց:*
Նպատակը—*№ 11-а—գլխաչափ:*
Հեռավորությունը—*100 մետր:*
Փամփուշտները—*անսահմանափակ քանակով:*
Դրությունը հրաձգության համար—*պառկած, փոկի օգտագործումը թույլ է տրվում:*
Ժամանակը հրաձգության համար—*անսահմանափակ:*
Գնահատականը—*որոշվում է կոմանդայի հաղթանակների քանակով:*

Կատարման կարգը. *5-ական հրաձգից բաղկացած երկու կոմանդա տեղավորվում են ստարտի գծի վրա, կրակի գծից 15 մետր հեռավորությամբ: Հրաձիգները պառկած են փորի վրա, հենվելով երկու ձեռքի արմունկների և նախաբազուկների վրա, ոտքերի դրությունը հրաձգի հայեցողությամբ. հրացանը լցրած չէ: Հրացանի և փամփուշտների դրությունը—հրաձգի հայեցողությամբ:*

*Վարժությունը կատարելու սկիզբը որոշվում է դատավորի ազդանշանով կամ «մարշ» հրամանով, որը տրվում է «պատրաստվել» հրամանից 5—10 վայրկյան անցնելուց հետո:*

*Դեպի կրակի գիծը դուրս վազելով, հրաձիգը հագնում է փոկը: Հրացանը լցնելը կատարվում է միմիայն կրակի գծի վրա առանց լրացուցիչ հրամանի: Հրաձգությունը կատարվում է ինքնուրույն կերպով իր կոմանդայի դիմաց*



*տեղավորված թիրախների վրա, մինչև վերջին թիրախի հարվածումը:*

*Իր կոմանդայի վերջին հինգերորդ թիրախը հարվածելու և ընկնելու մոմենտը նշանակվում է և վարժությունը կատարելու վերջն է հանդիսանում:*

*Այն կոմանդան, որը հարվածել է իր բոլոր թիրախներն ամենակարճ ժամանակամիջոցում, համարվում է հանդիպումը շահած, իսկ ամենամեծ ժամանակամիջոցում՝ տարված:*

## ԱՎԱԳ ԽՄԲԱԿԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

**1-ին վարժություն. Հրաձգություն՝ հակագազը հագած**
*(կոմանդային-անհատական)*

Զենքը—*փ/կ հրացան* ТОЗ-8 *կամ* ТОЗ-9:
Նշանոցը—*բաց:*
Նպատակը—*№ 9-а շրջաններով:*
Հեռավորությունը—*100 մետր:*
Փամփուշտները—*3 փորձնական և 5 քննական:*
Դրությունը հրաձգության համար—*պառկած, փոկի օգտագործումը թույլ է տրվում:*
Ժամանակը հրաձգության համար—*փորձնականների համար 5 րոպե, քննականների համար 5 րոպե:*
Գնահատականը—*որոշվում է աչկոների գումարով:*
Կատարման կարգը—*ինչպես կրտսեր խմբակի 1-ին վարժության ժամանակ:*

**2-րդ վարժություն. Հրաձգություն մինչև առաջին վրիպումը** *(կոմանդային-անհատական)*

Զենքը—*փ/կ հրացան* ТОЗ-8 *կամ* ТОЗ-9:
Նշանոցը—*բաց:*
Նպատակը—*№ 11-а վայրի ֆոնի վրա, երևան է գալիս 10 մետր մեծությամբ սեկտորում, 5 վայրկյան ժամանակով:*
Դրությունը—*պառկած, փոկի օգտագործումը թույլ է տրվում:*

Հեռավորությունը—100 մետր։

Փամփուշտները—անսահմանափակ քանակությամբ։

Գնահատականը—որոշվում է հարվածած թիրախների քանակով։

Կատարման կարգը․ դատավորը ցույց է տալիս հրաձգի հրաձգության համար նշանակված տեղը, որտեղ և որքան ժամանակով յերևան կգա նպատակը։ Հրաձիգը պատրաստվում է հրաձգության մինչև նպատակի յերևան գալը․ նպատակի յերևան գալուն պես, ինքնուրույն կրակում կրակ է բաց անում։ Թիրախը յերևան է գալիս 6 վայրկյան ժամանակով, 15 վայրկյան ընդմիջումներով թիրախները ցույց տալու միջև։ Հարվածելու դեպքում թիրախը միանգամից թաքնվում է։ Չհարվածած թիրախը 6 վայրկյանից հետո թաքնվում է, այլևս յերևան չի գալիս։ Փառոցի դեպքում հրաձգին իրավունք է վերապահվում հրաձգությունը շարունակելու։

### 3-րդ վարժություն. մենամարտական հրաձգություն
(կոմանդային վարժություն)

Զենքը—փ/կ հրացան ТОЗ-8 կամ ТОЗ-9։

Դիրքը—բաց։

Նպատակը—№ 11-а գլխաչափ։

Հեռավորությունը—100 մետր։

Փամփուշտները—անսահմանափակ քանակությամբ։

Դիրքը հրաձգության համար—պառկած, փոկի օգտագործումը թույլ է տրվում։

Ժամանակը հրաձգության համար—անսահմանափակ։

Գնահատականը—որոշվում է կոմանդայի հաղթանակների քանակով։

Կատարման կարգը․ յերկու կոմանդա, հնգական հրաձգից բաղկացած, տեղավորվում են ստարտի գծի վրա, կրակի գծից 25 մետր հեռավորությամբ. հրաձիգները պառկած են փորի վրա, հենվելով յերկու ձեռքի արմունկների և նախաբազուկների վրա, կամայականորեն, ոտքերի դրությունը հրաձգի հայեցողությամբ. հրացանը լցրած չէ. հրացանի և փամփուշտների դրությունը հրաձգի հայեցողությամբ։

Վարժության կատարման սկիզբը որոշվում է դատավորի ազդանշանով կամ «մարշ» հրամանով, որը տրվում է «պատրաստվել» հրամանից 5—10 վայրկյան անցնելուց հետո։

Դուրս վազելով կրակի գիծը, հրաձիգը հագնում է փոկը։ Հրացանը լցվում է միմիայն կրակի գծի վրա, առանց լրացուցիչ հրամանի։ Հրաձգությունը կատարվում է այն թիրախների վրա, որոնք տեղավորված են իր կոմանդայի դիմաց, մինչև վերջին թիրախի հարվածումը։

Իր կոմանդայի վերջին, հինգերորդ թիրախը հարվածելու և նրա ընկնելու մոմենտը նշանակվում է և հանդիսանում է վարժությունը կատարելու վերջանալը։

Այն կոմանդան, որը հարվածել է իր բոլոր թիրախներն ամենակարճ ժամանամիջոցում, համարվում է հանդիպումը շահած, իսկ ամենամեծ ժամանակամիջոցում՝ տարված։

### 4-րդ վարժություն. կոմպլեքսային (կոմանդային-անհատական)

Կոմանդայի կազմը—3 (ներկայացուցչի հայտի համաձայն 2-րդ խմբակի կոմանդայի կազմից)։

Զենքը—փ/կ հրացան ТОЗ-8 կամ ТОЗ-9։

Դիրքը—բաց։

Նպատակները և հեռավորությունը (հաշվվում է № 1 կրակի գծից)։

№ 21 (հաստոցավոր գնդացիր)—200 մետր։

№ 14 (վազեվազք) 3 հատ—200 մ., դասավորվում են 20—30 մետր ճակատի վրա, պատկերում են հակագրոհ տվող մի խմբակ։

№ 11 (գլխաչափ)—50 մ. (խրամատի մոտ), լավ քողարկված է, յերևում է միայն գլխի մի մասը,—պատկերում է դիտողին։

№ 12—կրծքաչափ, 5 անգամ փոքրացրած, 3 հատ—125 մետր, պատկերում է հակառակորդի հրաձիգներին, որոնք ցրված են 5—10 մետր ճակատի վրա։

**Փամփուշտները**—10։

**Պարագան**—1. Ցելակետային բնագիծը—20 մետրի վրա № 1 կրակի գծից։

2. № 1 կրակի գիծը խրամատից 50 մետրի վրա։

3. Խրամատ 1,5 մ. լայնությամբ, 20—30 սմ. խորությամբ, գերանից 15 մետրի վրա։

4. Կլոր գերան 3 մ. երկարությամբ, 20 սմ. տրամագծով, որը բարձրացրած է 1 մետր և գտնվում է № 2 կրակի գծից 10 մետրի վրա։

5. № 2 կրակի գիծը № 1 կրակի գծից 75 մետրի վրա (տես պարագայի սխեման)։

**Խնդիրը**. 1. Հարվածել բոլոր նպատակները։

2. Ցերկու նռնակ դիպցնել խրամատներին։

3. Որքան հնարավոր է հեռու նետել նռնակը։

4. Հաղթահարել բոլոր հեռավորությունները ցելակետային բնագծից մինչև № 2 կրակի գիծն ամենակարճ ժամանակամիջոցում։

**Կատարման կարգը**. ցելակետային բնագծի վրա հրաձիգն ստանում է 3 նռնակ-կոճղ և 10 փ/կ փամփուշտ։ Դատավորի հրամանով ծածուկ առաջ է շարժվում, գնում է № 1 կրակի գիծը և կրակ է վարում տեսանելի № 14, № 11 և № 21 նպատակների վրա, որոնք երևան են գալիս երկու րոպեյով։

№ 12 նպատակները, որոնք փոքրացրած են 5 անգամ, № 1 կրակի գծից հրաձգին չեն երևում։ Հարվածած № 21 նպատակը թաքնվում է։ Նպատակի թաքնվելուց հետո հրաձիգը դատարկած հրացանով և փակած փակաղակով (որն ստուգում է դատավորը) վազեվազք է կատարում և խրամատից 20 մետրի վրա, շարժվելիս, երկու նռնակ է նետում խրամատի վրա, հաղթահարում է խրամատը, անցնում է գերանի վրայով, 3—4 կարճ վազեվազք է կատա-



րում մինչև № 2 կրակի գիծը, որտեղ ծնկած նետում է նռնակը ըստ հեռավորության, պառկում է և կրակ է բաց անում № 12 նպատակների վրա (5 անգամ փոքրացրած), որոնք գտնվում են № 2 կրակի գծից 50 մետրի վրա։

**Գնահատումը**. 1. Խրամատին նռնակով յուրաքանչյուր դիպման համար հրաձգին հաշվում է երկու աչկո։

2. Նպատակի յուրաքանչյուր հարվածման համար, անկախ հեռակայությունից, հաշվում է մեկ աչկո։ Մեկ թիրախում հաշվի չեն առնվում երկու ծակատից ոչ ավելի։

3. Խրամատի վրայով թռնելու համար հաշվում է 2 աչկո, եթե խրամատի վրայով չի կարողացել թռնել—0 աչկո։

4. Անցել է գերանի վրայով—հաշվվում է երկու աչկո, չի անցել—0 աչկո։

5. Դեպի № 1 կրակի գիծը կանոնավոր կերպով դուրս սողալու համար հաշվվում է 1 աչկո։

6. 25 մետր հեռավորությամբ նռնակի նետման համար հաշվվում է 1 աչկո, հետագա յուրաքանչյուր 5 մետրի համար հաշվվում է 1-ական աչկո։

Հրաձգի հետևանքը որոշվում է աչկոների գումարով։ Աչկոների հավասարության դեպքում՝ հաշվի յե առնվում այն ժամանակը, որ գործադրել է հրաձիգը շերտը հաղթահարելու համար։

Կոմանդայի հետևանքը որոշվում է կոմանդայի աչկոների գումարով։ Կոմանդայի աչկոների հավասարության դեպքում՝ հաշվի յե առնվում այն ժամանակը, որը գործադրել է կոմանդան շերտի հաղթահարման համար, և կոմանդայի կողմից նռնակների նետման ընդհանուր հեռավորությունը։

## ՉԵՄՊԻՈՆԱՏ (1-ԻՆ ՅԵՎ 2-ՐԴ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

### 1-ին վարժություն

**Զենքը**—փ/կ հրացան ТОЗ-8 կամ ТОЗ-9։

**Նշանը**—ամեն տեսակի, բացի օպտիկականից։

**Նպատակը**—№ 7։

**Հեռավորությունը**—50 մետր։

**Փամփուշտները**—5 փորձնական և 20 քննական։

**Դիրքը հրաձգության համար**—պառկած, փոկի օգտագործումը թույլ է տրվում։

**Ժամանակը հրաձգության համար**—10 րոպե փորձնականների և 40 րոպե քննականների համար։

**Գնահատականը**—վորոշվում է աչկոնների գումարով։

**Կատարման կարգը**. դատավորը ցույց է տալիս հրաձգին հրաձգության նպատակն ու տեղը. դատավորի հրամանով հրաձիգը պատրաստվում է հրաձգության, լցնում է հրացանը և կրակ է բաց անում։

### 2-րդ վարժություն

**Զենքը**—փ/կ հրացան ТОЗ-8 կամ ТОЗ-9։

**Նշանոցը**—ամեն տեսակի, բացի օպտիկականից։

**Նպատակը**—№ 5։

**Հեռավորությունը**—100 մետր։

**Փամփուշտները**—5 փորձնական, 10 քննական։

**Դիրքը հրաձգության համար**—պառկած, փոկի օգտագործումը թույլ է տրվում։

**Ժամանակը հրաձգության համար**—10 րոպե փորձնականների և 20 րոպե քննականների համար։

**Գնահատականը**—վորոշվում է աչկոնների գումարով։

**Կատարման կարգը**. դատավորը ցույց է տալիս նպատակը և հրաձգության տեղը. դատավորի հրամանով հրաձիգը պատրաստվում է հրաձգության, լցնում է հրացանը և կրակ է բաց անում։

## ՆՌՆԱԿԱՁԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

**դպրոցական, շրջանային, մարզային, հանրապետական յեվ համամիութենական մրցակցությունների համար**

**Կոմանդայի կազմը**—3 մարդ։ Զոկվում են ավագ խմբակի կոմանդայի կազմից։



**Վարժության նշանակումը**—պրակտիկա տալ ուղղաձիգ նպատակի վրա ձեռքի (հարձակողական) նռնակների նետման գործում։

**Նպատակը**— 3 պատուհան 100 սմ. բարձրությամբ և 70 սմ. լայնությամբ, վորոնք դրված են գետնից 1—2 մետր բարձրության վրա։

**Հեռավորությունը մինչև նպատակները**—մինչև 1-ինը—15 մետր, մինչև 2-րդը—12 մ., մինչև 3-րդը—10 մ.։

**Նռնակների քանակը**—3 վարժական (յերկուսը պայուսակում և մեկը ձեռքին)։

**Ժամանակը**—1 րոպե։

**Գնահատումը**—մեկ նռնակով հարվածել 1-ին պատուհանը—«գերազանց» (5 բալլ), 2-րդ պատուհանը—«լավ» (4 բալլ), 3-րդ պատուհանը—«բավարար» (3 բալլ)։

**Առաջնության վորոշումը**—բալլերի քանակով։ Բալլերի հավասար քանակի դեպքում—ամենակարճ ժամանակով։

**Կատարման կարգը**—հրաձիգը, նռնակներն ստանալով կրակի բնագծից 15 մետրի վրա, սողում է հրացանով և նռնակներով դեպի կրակի բնագիծը և ամենամոտիկ պատուհանից 10 մ. հեռավորության վրա նետում է նռնակները բոլոր յերեք պատուհանների վրա ծնկած դրությունից։ Ժամանակը հաշվվում է սողալու սկզբից։

**Ծանոթություններ.**— 1. վարժական նռնակի քաշը պետք է հավասար լինի մարտականի քաշին։

2. Նռնակաձգության դպրոցական մրցակցությունները անց են կացվում առանց սողալու։

### Հրաձգային մրցակցությունների անցկացման ցուցումներ

1. Մրցակցություններին մասնակցելը թույլ է տրվում «Վորոշիլովյան պատանի հրաձիգներին», «Վորոշիլովյան հրաձիգներին» և այն դպրոցականներին, վորոնք պատրաստվել են հրաձգային խմբակներում, բայց դեռ չեն հանձնել նորմաները։

2. Նռնակաձգության վարժությունը կատարելու համար

3 մարդ են ջոկվում ավագ խմբակի հրահանգների կողմից։ Ավագ և կրտսեր խմբակների մնացած հրահանգները կարող են մասնակցել նռնակաձգության մրցակցություններին կոնկուրսից դուրս։

3. Բոլոր մրցակցությունների համար փամփուշտները —5,6 մմ. տրամաչափի, հայրենական արտադրության։

4. Հրացանի վորևե կոնստրուկտիվ փոփոխություն, բացի կոթի կարճացումից, չի թույլատրվում։

5. Բոլոր վարժությունների կատարման ժամանակ գնահատումը կատարվում է.

ա) №№ 5, 6, 7 և 9-a թիրախների վրա—գնդակի ծակատի գաբարիտի խախտումով։

բ) Ֆիգուրավոր շրջանկտրած թիրախի ժամանակ դիպում է համարվում առնվազն ծակատի կեսի առկայությունը ֆիգուրի մեջ։ Ռիկոշետները (ընդոստումից հետո գնդակի դիպած տեղը) և այրվածքները հաշվի չեն առնվում։

6. Հրաձգության ճշտումը թույլ է տրվում դպրոցական մրցակցություններում, շրջանային ու մարզային մրցակցությունների 1-ին վարժության ժամանակ և Համամիութենական մրցակցությունների չեմպիոնատում։

## «ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՅԵՎ «ԿԱՊ» ՀԱՏՎԱԾԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

### 1-ին խմբակի (5—7 դասարանների) համար

#### Աշխատանք քարտեզի յեվ վայրի վրա

Ուսումնասիրել հետևյալ հարցերը.

ա) քարտեզի մասշտաբի ընթերցումը և կարողանալ անցնել ռուսական չափերով արտահայտված մասշտաբից մետրական չափերով արտահայտված մասշտաբի։

բ) Աշխարհի կողմերի վորոշումը արեգակով ու ժամացույցով, աստղերով և տեղական առարկաներով։

գ) Քարտեզով շարժվելը և վայրի ռելյեֆի համընթաց ընթերցումն առաջադրված մարշրուտով։

դ) Ռելյեֆի զանազան ձևերի՝ բարձրության, խորության, կատարի, ձորակի, թամբարդի, զառափուլի, սանդղեվանդի և հեղեղատի նկարումը հորիզոնականներով։

ե) Հետերի թշխումը և լանջերի ուղղորդությունը վորոշելը քարտեզով։

զ) ԹՆ վարակված վայրի քարտ կազմելը։

Խնդիրը կազմվում է ուսումնասիրած հարցերի ծավալի համեմատ և հայտնվում է մրցակիցներին միմիայն մրցակցությունների ժամանակ։

#### Խնդրի մոտավոր բովանդակությունը

Խնդրի պայմանը.—Մրցակցության մասնակցողը պետք է անցնի քարտեզի վրա նշանակած «Ա» կետից «Բ» կետը։ Շարժման ճանապարհին գտնվում է մի պուրակ կամ վորևե այլ տեղական առարկա, «Բ» կետից $^1/_2$ կմ դեպի արևմուտք։ Մեր ունեցած տեղեկություններով անտառի արևմտյան յեզրը վարակված է ԹՆ-ով։

Պահանջվում է կատարել.

1. Գրել քարտեզի մասշտաբը ռուսական չափերով (յեթե քարտեզի վրա ցույց է տրված մետրական չափերով) և ընդհակառակը։

2. «Շարժվել» քարտեզով առաջադրված մարշրուտով և նկարագրել ռելյեֆը (վորը նշանակած է քարտեզի վրա դատավորական հանձնաժողովի կողմից)։

3. Վորոշել «Բ» կետի «բարձրագունությունը «Ո» կետից, «Ա» կետի բարձրագունությունը «Կ» կետից և այլն (վորոնք նշանակված են քարտեզի վրա դատավորական հանձնաժողովի կողմից)։

4. Վորոշել լանջի ուղղորդությունը Իվաշևո գյուղից դեպի Ցյոդորովկա գյուղը։

5. Պուրակի յեզրը հասնելով, կազմել ԹՆ-ով վարակված վայրի քարտը։

Գնահատումը.—«Գերազանց» (5 բալլ)—խնդրի արագ և բացարձակապես ճիշտ լուծում։

«Լավ» (4 բալլ)—խնդրի արագ և հիմնականում ճիշտ լուծում։

«Բավարար» (3 բալլ)—խնդրի դանդաղ, բայց հիմնականում ճիշտ լուծում։

«Անբավարար» (0 բալլ)—խնդրի վոչ ճիշտ լուծում։

**Կատարման կարգը.**—Մրցակցությունններն անց են կացվում դասարանում։ Մրցակցության մասնակցողները ստանում են տեղագրական քարտեզներ, նրանց վրա նշանակած առաջադրություններով, և անհրաժեշտ գործիքներ (քանոններ, կարկին և այլն)։ Ավագ դատավորը հայտարարում է խնդրի պայմանները։ Խնդրի լուծումն սկսում են միաժամանակ բոլոր մասնակիցները դատավորի թույլտվությունից հետո։ Խնդիրը վերջնականապես լուծելուց հետո մրցակցության մասնակցողը վեր է կենում և հայտարարում է՝ «վերջացրել եմ»։

## 2-ՐԴ ԽՄԲԱԿԻ (8—10 ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ) ՀԱՄԱՐ

### 1-ին վարժություն

I. Ազիմուտ, դրա վորոշումը և ազիմուտով շարժումը

Ուսումնասիրության ենթակա հարցերը.

ա) Ազիմուտի վորոշումը վայրի վրա։
բ) Ազիմուտի վորոշումը քարտեզի վրա։
գ) Ազիմուտով շարժումը՝ հասարակ և բարդ։

### 2-րդ վարժություն

II. Աչքաչափական հանույթ

Պահանջվում է գիտենալ.

ա) գծերի չափումը վայրի վրա.
բ) քայլերի և ժամանակի մասշտաբների կառուցումը.
գ) պլանշետի վրա վայրի վրայի կետերի նկարման յեղանակները.
դ) պլանշետի կողմնորոշումը.



ե) պլանշետի վրա ուղղությունների նկարումը (ուղիղ և հակադարձ տարադիտում)։

1-ին վարժության յուրաքանչյուր հարցի վերաբերյալ պետք է պատրաստված լինեն խնդիրներ, վորոնք հաղորդվում են մասնակցողներին միմիայն մրցակցության ժամանակ։

2-րդ վարժության համար դատավորական հանձնաժողովը ընտրում է համապատասխան տեղամաս և սահմանում է աչքաչափական հանույթի սկզբի և վերջի ժամերը։

Գնահատումը կատարվում է նույնպես, ինչպես և 1-ին խմբակինը։

## ԴՐՈՇԱԿՆԵՐՈՎ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Դպրոցական, շրջանային, մարզային, հանրապետական յեվ համամիութենական մրցակցությունների 1-ն յեվ 2-րդ խմբակների համար**

## ԾՐԱԳԻՐ

### ԴՐՈՇԱԿՆԵՐՈՎ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

**Պայմանները.** Պոստերը դասավորվում են առնվազն 400 մետր հեռավորությամբ։ Դրոշակագրերը պետք է լինեն 25 խմբակից (բառից) վոչ ավելի։ Աշխատանքն անց է կացվում մեկ ժամի ընթացքում։ Փոխանակման ընդհանուր ժամանակի մեջ են մտնում՝ կանչելը և առաջադրությունը, համաձայնության ստացումը, հաղորդումը և ընդունումը։

Պոստը սպասարկում են յերկու մարդ։

**Գնահատումը համամիութենական մրցակցությունների համար**

«Գերազանց»—(5 բալլ)—100 խմբակ մեկ ժամում։
«Լավ» —(4 բալլ)— 90 » » »
«Բավարար» —(3 բալլ)— 70 » » »

**Գնահատումը շրջանային մրցակցությունների համար**

*«Գերազանց»—(5 բալլ)—80 խմբակ մեկ ժամում:*
*«Լավ» —(4 բալլ)—70 » » »*
*«Բավարար» —(3 բալլ)—50 » » »*

**Մրցակցությունների տեղը**—*թփուտներով կտրտված վայր:*

**Նյութական մասը**—*ազդանշանային դրոշակներ—4, մատիտներ և թուղթ:*

**Կատարման կարգը.** *«Պոստերը գրավել» հրամանով մրցակցության մասնակցողներն ընտրում են տեղը, քողարկվում են և «աշխատանքն սկսել» ազդանշանով (ժամանակը նկատվում է ժամացույցով) սկսում են կանչելը և փոխանակման հաղորդումը:*

**Ծանոթություն.**—*Գնահատականը համամիութենական մրցակցությունների համար վերցված է ԲԳԿԲ ուսուցման 1-ին տարվա կարմիր բանակայինների համար տված ցուցումներից, իսկ մարզային, շրջանային մրցակցությունների համար համապատասխանորեն կրճատված է:*

*Անհատական հետևանքը վորոշվում է՝ տեղագրությունից և կապից ստացած բալլերի քանակով: Բալլերի հավասարության դեպքում՝ խնդրի լուծման համար գործադրած ամենակարճ ժամանակով:*

*Կոմանդային հետևանքը վորոշվում է՝ տեղագրությունից և կապից կոմանդայի ստացած բալլերի քանակով: Բալլերի քանակի հավասարության դեպքում վորոշվում է ամենակարճ ժամանակով:*

## ՀՈՔՊ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ 1-ԻՆ ԽՄԲԱԿԻ (5—7 ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ) ՀԱՄԱՐ

### Վարժություն № 1

**Հակագազ հագնելը** *(կոմանդային), կոմանդայի կազմն է 4 մարդ:*

**Մրցակցությունների տեղը**—*մեծ դահլիճ կամ բաց հրապարակ:*



**Նյութական մասը**— *մասնակիցներին հակագազերով 100% ապահովում:*

*Հակագազի* **կողակի** *կամ դիմակի չափերն ընտրվում են անհատականորեն: Վայրկենաչափեր՝ դատավորների թվի համեմատ (կարելի յե օգտվել վայրկենասլաք ունեցող ժամացույցներով):*

**Յելակետային դրությունը.** *Կոմանդան շարվում է ստարտում, ունենալով հակագազերը «պատրաստի» դրությամբ, հակագազի պայուսակը ձախ կողքին, փոկն աջ ուսով գցած: Հակագազի պայուսակի վերին ծայրը գոտեփոկի բարձրությամբ: Պայուսակի կլապանները բաց են: Փուղն անց է կացրած ձախ ողի միջով, ընդգրկում է իրանամեջը (գոտկատեղը) և ամուր կապած է աջ ողից: Կոմանդան գլխարկները հագած է:*

**Վարժության կատարումը.** *Տրվում է հրաման «գազեր» և միաժամանակ գործի գցվում վայրկենաչափը:*

*Վարժությունը կատարվում է կանգնած, հակագազով օգտվելու կանոններին համապատասխան:*

**Վերջնական դրությունը**—*հակագազը մարտական դրությամբ, այսինքն կողակը (դիմակը) մրցակցության մասնակցողի գլխին, գլխարկները դիմակների վերևից: Կոմանդայից վերջինի կողմից ձեռքերն իջեցնելու մոմենտին կանգնեցվում է վայրկենաչափը:*

**Գնահատումը**—*«Գերազանց»—մինչև 3 վայրկյան, «լավ» —մինչև 4 վայրկյան և «բավարար»—մինչև 5 վայրկյան:*

*Կոմանդայի կազմից յուրաքանչյուրի սխալի համար ավելացվում է ժամանակը. ճիշտ չէ հագած կամ ընկել է գլխարկը—1 վայրկյան, կողակի (դիմակի) ակնոցների փոքր թեքման համար—1 վայրկյան, կողակի (դիմակի) ակնոցների շատ թեքման համար մեկ կամ ավելի մասնակիցների մոտ—«անբավարար» գնահատական:*

### Վարժություն № 2

**Հակագազն անհատականորեն հագնելը.**— *Յելակետային դրությունը, վարժության կատարումը և վերջնական դրու-*

թյունը նույնն են, ինչ որ կոմանդային վարժության ժամանակ։

Գնահատումը.— «Գերազանց»—2 վայրկյան, «Լավ»—3 վայրկյան և «Բավարար»—4 վայրկյան. իսկ սխալների համար ժամանակի նույնպիսի ավելացում է կատարվում, ինչպես կոմանդային վարժության ժամանակ։

**Վարժություն № 3**

Հրձիգ ռումբերի մարումը (կոմանդային)

Կոմանդային կազմն է—4 մարդ։

Մրցակցությունների տեղը—Բաց հրապարակ, ամեն տեսակի շինությունները և կառուցվածքները պետք է լինեն 100 մետրից ոչ ավելի մոտ։

Նյութական մասը— 4 հավագաղ, 20 տոպրակ՝ յուրաքանչյուրի մեջ 2—3 կիլոգրամ ավազ, 4 թիթեղյա կափարիչներ (ծխագլանների կափարիչներ կամ դրանց համասարները), սև նավթ կամ մազութ, 2 թի, 7 գունավոր դրոշակներ (2 կապույտ, 4 կարմիր, 1 սպիտակ)։ Բացի այդ, նախազգուշացման նպատակով մոտերքում դրվում են 2 կրակմարիչ և ավազով լի արկղ հրդեհ առաջանալու դեպքի համար։

## ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

Հրապարակի վրա կենտրոնից (սպիտակ դրոշակ) դեպի հարավ և հյուսիս չափում են 30 մետրանոց հեռավորություններ, որտեղ մեկական կապույտ դրոշակ են կանգնեցնում, որը նշանակում է մրցակցության մասնակցողների յելակետային դրությունը. դրոշակների մոտ դնում են 2-ական ավազով լի տոպրակ. այնուհետև կենտրոնից դեպի հյուսիս-արևելք, հարավ-արևելք, հարավ-արևմուտք և հյուսիս-արևմուտք չափում են 9 մետրանոց հեռավորություն և դնում են մեկական կարմիր դրոշակ և 3-ական ավազով լի տոպրակ։ Այս դրոշակները որոշում են այն տեղերը, որտեղից մրցակցողը հանգցնում է հրդեհի օջախները։

Վերջապես, չափում են 2 մետրանոց հեռավորություններ կենտրոնից դեպի հյուսիս, արևելք, հարավ և արևմուտք, որտեղ դնում են թիթեղյա կափարիչներ՝ կերոսինի և սև նավթի խառնուրդով տոգորված խծուծով՝ հրդեհի օջախներ ստեղծելու համար։ Հանգցնելու հեռավորությունը 7 մետր է։

Յելակետային դրությունը։ Կոմանդան բաշխվում է յերկու պոստի յերկուական մարդուց բաղկացած։

Առաջին պոստը կանգնած է հյուսիսային յելակետային դիրքերում, իսկ յերկրորդ պոստը՝ հարավային յելակետային դիրքերում։ Յուրաքանչյուր մրցակցողի մոտ դրված են յերկուական ավազով լի տոպրակ։

Հակագազերը «Պատրաստ» դրության մեջ են։

Վարժության կատարումը։ Դատավորի «Ուշադրություն» հրամանով մրցակցողները «զգաստ» դրություն են ընդունում, յերեսները դեպի կենտրոնը։ Միաժամանակ վառում են կափարիչների վրայի խծուծը, և յերբ կրակը կբորբոքվի, դատավորը հրաման է տալիս «հանգցնել կրակը». մրցակցողները փոխադրում են հակագազերը «մարտական դրության» և վազում են այնտեղ հրդեհի օջախները հանգցնելու համար (կարմիր դրոշակների մոտ)։

Մրցակցողներից յուրաքանչյուրն ունի 5 տոպրակ, որոնցով նա կարող է հանգցնել հրդեհի օջախներից ամեն մեկը։

Կարմիր դրոշակի այն կողմն անցնել (հրդեհի օջախին ավելի մոտ) մրցակցողներին չի թույլատրվում։

Վերջնական դրությունը։ Բոլոր օջախները մարած պիտի լինեն, կրակ չպիտի լինի։ Հրդեհի վերջին օջախի մարելն ավարտելու մոմենտին կանգնեցվում է վայրկենաչափը։ Հաշվվում է ժամանակը և նշանակվում է, թե որքան տոպրակ է օգտագործվել։

Մրցակցություններին մասնակցողների կողմից կանոնները խախտելու համար կոմանդան տուգանվում է օգտագործած տոպրակների քանակի ավելացումով.

ա) յեթե մրցակցողներից մեկն ու մեկն անցնում է դեպի ոջախը, կարմիր դրոշակի մյուս կողմը—2 տոպրակ.

բ) յեթե մասնակցողներից մեկնումեկը կորցնում է գլխարկը—1 տոպրակ.

գ) յեթե մասնակցողներից մեկնումեկը հանում է հակագազը—«անբավարար»։

**Գնահատումը**—«գերազանց»—բոլոր ոջախների մարում, ոգտագործելով 8 տոպրակից վոչ ավելի. «լավ»—նույնը, բայց 10 տոպրակից վոչ ավելի, «բավարար»—նույնը, 10-ից մինչև 16 տոպրակ ոգտագործելու դեպքում։

16 տոպրակից ավելի ոգտագործելու դեպքում գնահատականն «անբավարար» է։

Հրդեհի ոջախները հանգցնելու արագությունը հաշվի յե առնվում կոմանդաների մեջև տեղը վորոշելու համար, յեթե նրանց կողմից հավասար քանակությամբ տոպրակներ են ոգտագործվել։ Վորքան ավելի քիչ ժամանակ է գործադրված, այնքան ավելի լավ տեղ է հատկացվում կոմանդային։

**Ծանոթություններ.**— 1. Հրդեհի ոջախների մարումը կատարվում է ամբողջ կոմանդայի կողմից միաժամանակ։

2. «Հրձիգ ռումբերի մարում»—վարժության անցկացնելու որվա և տեղի մասին անհրաժեշտ է վաղորոք նախազգուշացնել ամենամոտիկ հրշեջ խմբին։

Դպրոցական և շրջանային մրցակցությունների ժամանակ հրձիգ ռումբերը հանգցնելու հեռավորությունն է՝ հինգ մետր։

### Վարժություն № 4

(Հրձիգ ռումբերի մարում՝ անհատական)

Կատարվում է միայն հանրապետական ու համամիութենական մրցակցությունների ժամանակ։ Մրցակցությունների տեղը և նյութական մասը համանման են կոմանդային մրցակցություններին։



**Հրապարակի կահավորումը։** Հրապարակի վրա յերեք գիծ են չափում։

1. Ցելակետային դիրքերի գիծը, վորը նշանակվում է կապույտ դրոշակներով։

2. Հրդեհի ոջախները մարելու դիրքը, վորը նշանակվում է կարմիր դրոշակներով և կավճային խազով (գծով)։

3. Հրդեհի ոջախների գիծը, վորը նշանակվում է սպիտակ դրոշակներով։

Հրդեհի ոջախների գծից մինչև հանգցնելու դիրքը յեղած հեռավորությունը՝ 7 մետր է, իսկ մինչև ցելակետային դիրքերը—25 մետր։

Ցելակետային դիրքերում կապույտ դրոշակների մոտ դրվում են յերկուական ավազով լի տոպրակ։ Հրդեհի ոջախները մարելու գծի վրա (կարմիր դրոշակների մոտ) ավազով լի ևս 3-ական տոպրակ։

**Ցելակետային դրությունը.** հերթական, 4 մարդուց բաղկացած հերթափոխը շարվում է ցելակետային դիրքերում, կապույտ դրոշակների մոտ, յերեսները դեպի հրդեհի ոջախները։

Յուրաքանչյուր մասնակցողի մոտ, գետնի վրա դրվում են յերկուական տոպրակ ավազով։ Հակագազերը «պատրաստ» դրությամբ են։

**Վարժության կատարումը.** դատավորի «ուշադրություն» հրամանով մասնակցողներն ընդունում են այդ դրությունը, վորը համապատասխանում է «զգաստ» հրամանին։ Միաժամանակ վառում են կափարիչների վրայի հնոտին (խծուծը) և յերբ նա բորբոքվի, դատավորը հերթափոխներից յուրաքանչյուրին հերթով հրաման է տալիս «կրակը մարել»։

Վարժության կատարումը և տուգանքային աչկոների ավելացումը նույնն են, ինչ վոր կոմանդային մրցակցությունների ժամանակ։

**Գնահատումը.** «Գերազանց»—հրդեհի ոջախի մարում, ոգտագործելով 2 տոպրակից վոչ ավելի, «լավ»—նույնը 3

տոպրակով, «բավարար»—նույնը 4 տոպրակից վոչ ավելի։ 4 տոպրակից ավելին օգտագործելու կամ օջախը չմարելու դեպքում՝ «անբավարար» գնահատական է տրվում։

Ժամանակը հաշվի յե առնվում ինչպես և կոմանդային մրցակցությունների ժամանակ։

## ՀՈՔՊԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ 2-ՐԴ ԽՄԲԱԿԻ (8—10 ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ) ՀԱՄԱՐ

### Վարժություն № 1

### Հակագազի փոխարինումը թունավորող նյութերի մթնոլորտում *(կոմանդային)*

*Կոմանդան—4 մարդուց բաղկացած.*

Մրցակցությունների տեղը—*Գազախուց (գազակամերա), վորը լցված է խլորպիկրինի գոլորշիներով $15^3$ համար 0,1—0,2 սմ³ կոնցենտրացիայով (խտացումով)։*

Նյութական մասը. *8 հակագազ, վորոնք պիտանի յեն ԹՆ մթնոլորտում աշխատելու համար, դիմակներով, վորոնք համարեցված են մասնակցողների գլխի չափերին։*

Ելակետային դրությունը։ *Մրցակցողները շարվում են ստարտում, հակագազերն ունենալով «Պատրաստ» դրությամբ։ Յուրաքանչյուր մրցակցողի մոտ յերկուական հակագազ կա։* Հիմնական *հակագազի պայուսակը ձախ կողքին է,* պահեստի *հակագազի պայուսակն աջ կողքին, պահեստի հակագազի ուսափոկը հիմնականի ուսափոկի վրայից է անցնում։ Ստարտում դատավորներն ստուգում են հակագազի տեղավորումը պայուսակի մեջ և պայուսակների դրության կանոնավորությունը։*

*Պահեստի հակագազի կորզակի (դիմակի) կզակատակի մասը չպետք է դուրս գա հակագազի պայուսակի առջևի պատի վերին յեզրի տակից։ Չի թույլատրվում յետ ծալել կորզակի հաստացրած յեզրը։ Պահեստի հակագազի պայուսակը պետք է կախված լինի ճիշտ կողքին, չի թույլատր-*



*վում տեղաշարժել այն դեպի առաջ։ Բոլոր մրցակցողները պետք է գլխարկները հագած լինեն։ Յեթե հայտնաբերվի, վոր պայուսակների փոքր բաժանմունքներում (թեկուզ մեկ մրցակցողի մոտ) կողմնակի իրեր կամ յերիզի կտորներ են կարած ներսի կողմից հակագազի դիմակային մասը վերին դրությամբ պահելու համար, նույնպես և յեթե հայտնաբերվի, վոր քանդած է պահեստի հակագազի պայուսակի առջևի և ձախ կողքի պատերը միացնող կարը, ապա ամբողջ կոմանդան հեռացվում է ստարտից և նրան գրանցվում է պարտություն («անբավարար») մրցակցության տվյալ տեսակի համար։*

*Հակագազի տեղավորումը ստուգելուց հետո դատավորը տալիս է «գազեր» հրամանը։ Այդ հրամանով մրցակցողները հագնում են հիմնական հակագազերը և դատավորը ստուգում է հագնելու ճիշտ լինելը, թույլ տալով ուղղել կորզակի (դիմակի), յերիզի դրությունը և այլն։*

*Մրցակցողներին գազախուցը մտցնելուց հետո, դատավորը հրաման է տալիս «պատրաստվել» ու հետո (1—2 վայրկյանից հետո) «փոխել»։ «Պատրաստվել» և «փոխել» հրամանների արանքում մրցակցողներին իրավունք չունեն ուղղել պահեստի հակագազի դիմակային մասի դրությունը։ Այս կանոնը խախտելու ամեն մի փորձի համար ավելացվում է 3 վայրկյան։*

*Վայրկենաչափը գործարկվում է «փոխել» հրամանի հետ միաժամանակ։ Այս հրամանով բոլոր մրցակցողները սկսում են փոխել հակագազը։*

Վարժության կատարումը։ *Պահեստի հակագազի կորզակը հագնելուց հետո, անպայման պետք է արտաշնչել, աջ ձեռքի մատներով սեղմելով միացնող խողովակը (նախափողակի մոտ)։ Նախափողակը շրջելը միացնող փողակը սեղմելու համար արգելվում է։*

Ծանոթություն։ *Տվյալ յեղանակը (ձևը) միատեսակություն ձեռք բերելու նպատակով, գործադրվում է*

նաև դիմակ ունեցող հակագազով օգտվելու ժամանակ։

Հակագազը փոխելուց և միացնող խողովակը սեղմելով արտաշնչում կատարելուց հետո՝ մրցակցողներն իջեցնում են ձեռքերը. վայրկենաչափը կանգնեցվում է վերջինի ձեռքերն իջեցնելու համեմատ այն մոմենտին, երբ այդ մրցակցողի աջ ձեռքը կարճակի սեղմած միացնող խողովակը։

Վերջնական դրությունը։ Մրցակցողը հագած ունի պահեստի հակագազը, հիմնական հակագազին միացնող խողովակը կորդակի (դիմակի) հետ միասին ազատորեն իջեցված է։

Մրցակցողները կանգնած են «Զգաստ» դրությամբ, արգելվում է ուղղել կորդակները (դիմակները) և գլխարկները՝ արտաշնչում կատարելուց հետո։ Դատավորը նշում է թույլ տված սխալները։

Գազախուցից դուրս գալուց հետո դատավորի «իմ յետևից, քայլով մարշ» հրամանով դատավորը հրաման է տալիս հակագազերը հանել և ստուգում է մրցակցողների մոտ աչքերի գրգռման և հազի առկայությունը։

Յուրաքանչյուր մրցակցողի սխալների համար ավելացվում է ժամանակը։

| | | |
|---|---|---|
| Գազախուցում գլխարկն ընկել է կամ չի հագած | 1 | վայրկյան |
| կորդակի (դիմակի) փոքր թեքում | 1 | » |
| Մեծ թեքում | 2 | » |
| Աչքերի թույլ գրգռում | 2 | » |
| Աչքերի ուժեղ գրգռում և հազ | 3 | » |
| Գազախուցից մրցակցողի դուրս գալու համար, մինչև դատավորի հրամանը «իմ հետևից, խուցից, քայլով մարշ» | 3 | » |

Գումարային գնահատում: «Գերազանց»—6 վայրկյան, «լավ»—8 վայրկ., «բավարար»—10 վայրկյան։

Վարժությունն անց է կացվում միմիայն հանրապետական և համամիութենական մրցակցությունների ժամանակ. դպրոցական, շրջանային ու մարզային մրցակցու-



թյունների ժամանակ դրա փոխարեն անց է կացվում կոմանդային վարժությունը՝ «հակագազ հագնելը» 5—7 դասարանների դպրոցականների համար ծրագրով։

### Վարժություն № 2

### «Հակագազի փոխարինումը ԹՆ մթնոլորտում»

### Անհատական

Ելակետային դրությունը: Վարժության կատարումը և վերջնական դրությունը նույնն են, ինչ որ կոմանդային մրցակցության ժամանակ։

Գնահատումը. «Գերազանց»—5 վայրկյան, «լավ»—6 վայրկյան և «բավարար»—8 վայրկյան։

Սխալների համար ժամանակի նույնպիսի ավելացում է կատարվում, ինչ որ կոմանդային մրցակցությունների ժամանակ։ Աչքերի ուժեղ գրգռման կամ հազի համար, նույնպես և դատավորի հրամանից շուտ գազախուցից դուրս գալու համար «անբավարար» գնահատական է տրվում։

Վարժությունը կատարվում է նույնպես միմիայն հանրապետական և համամիութենական մրցակցությունների ժամանակ։

### Վարժություն № 3

### Գազահանում ձեռքի РДП—1 պրիբորներով

### Կոմանդային մրցակցություն

Կոմանդան—2 մարդուց բաղկացած։

Մրցակցության տեղը—հրապարակ պատի կամ ցանկապատի մոտ։

Նյութական մասը—РДП—1 մեկ պրիբոր (գործիքը) գազահանող նյութեր, տոպրակներ ազով և լեղակով, 100-ական գրամ յուրաքանչյուրի մեջ, յերկու դույլ 10 լիտրանոց և ջրով լի տակառ։

**Ելակետային դրությունը։** *Կոմանդան շարված է Թն «վարակված» տեղից 25 մետր հեռավորության վրա։ Պաշտպանական հագուստը և հակագազերը մարտական դրության մեջ են։ Նյութական մասը գտնվում է կոմանդայից ձախ, 3 մետրի վրա։*

**Վարժության կատարումը։** *Դատավորի «գազահանում սկսել» հրամանով գործարկվում է վայրկենաչափը։ Կոմանդան սկսում է պրիբորը լցնել։*

*Առաջին համարը ծածկում է պրիբորի կափարիչը, յերկրորդ համարն օգնում է առաջինին պրիբորը վերցնելու և ուսերին գցելու գործում, վորից հետո առաջինը գնում է գազահանման տեղը, յերկրորդը պատրաստում է լրացուցիչ լուծույթ և բերում է գազահանման տեղը։*

*Գազահանման տեղամասն է՝ մի պատ, վորն ունի 24 մ², 2 մետր բարձրության ժամանակ։*

*Առաջին համարը, մոտենալով գազահանման տեղամասին, նախապատրաստում է պրիբորն աշխատանքի համար (բռնակով 5—6 ճոճում է կատարում), իսկ հետո բացում է ծորակը և ուղղաձիգ մակերևույթի գազահանում է կատարում վերից վար, մեկ րոպեյում 16—20 անգամ ճոճելով լծակը։ Փոշիացուցիչը պետք է գտնվի պատից 20 սմ վրա։*

*Ամբողջ լուծույթն օգտագործելուց հետո նա բարձրացնում է ձեռքը։*

*Յերկրորդ համարը մոտենում ու օգնում է պրիբորն իջեցնելու և նրա վերալցում է կատարում։*

**Վերջնական դրությունը։** *Յերկրորդ լիցքի լուծույթն օգտագործելուց հետո առաջին համարը վերադառնում է ելակետային դրության տեղը։ Իջեցնում է պրիբորը և զեկուցում է գազահանումն ավարտելու մասին՝ «գազահանումն ավարտել եմ»։*

*Զեկուցումը վերջացնելուց հետո վայրկենաչափը կանգնեցվում է։*

**Գնահատումը։** *Առաջնությունը հատկացվում է այն կոմանդային, վորը կատարել է վարժությունն ամենակարճ ժամանակամիջոցում։*



*Սխալների համար ավելացվում է.*

*1. $_0/^0{}_0/^0$ հարաբերությամբ լուծույթի կազմել չկարողանալը—30 վայրկյան*

*2. Պրիբորը լցրած է վոչ թե քամիչի միջոցով և պրիբորի վրա լուծույթ է թափած—10 վայրկյան։*

*3. Պրիբորը լցնելը, առանց ուսերից իջեցնելու—10 վայրկյան։*

*4. Նորմալ հեռավորությունից 10 սմ. հեռացում կամ մոտեցում—10 վայրկյան։*

*5. Բրանդսպոյտը քանդել, քամիչի և փոշիացուցիչի կեղտոտվելու պատճառը վերացնել չկարողանալը—30 վայրկյան։*

*6. Գազահանման ժամանակ լուծույթն իր վրա թափելը—30 վայրկյան։*

*7. Գազահանումը ներքևից—10 վայրկյան։*

*«Գերազանց»—25 րոպե, «լավ»—27 րոպե, «բավարար»—30 րոպե։*

*Վարժությունն անց է կացվում միայն հանրապետական և համամիութենական մրցակցությունների ժամանակ. շրջանային և մարզային մրցակցությունների ժամանակ դրա փոխարեն անց է կացվում «Հրձիգ ռումբերի մարում» վարժությունը (կոմանդային) 5—7 դասարանների դպրոցականների համար ծրագրով։*

**Վարժություն № 4**

Գազահանում դեգազացիոն ВДП—1 անիվներով կրելի պրիբորով

Կոմանդային մրցակցություն

*(Միմիայն համամիութենական մրցակցությունների համար)*

*Կոմանդա—3 մարդուց բաղկացած, վորը կազմում է գազահանող համբանքը։*

Մրցակցությունների տեղը—*բաց հրապարակ հարթ մակերևույթով։*

*Նյութական մասը—յերեք կոմպլեկտ պաշտպանական հագուստ, 50 կիլոգրամանոց տակառ քլորակրով (փոխարինվում է մանր ավազով—$^{1}/_{3}$, վորը խառնված է փայտաթեփի հետ—$^{2}/_{3}$), մեկ պրիբոր* ВДП—1, *չորս դեղին և յերկու կարմին դրոշակ, յերկու վայրկենաչափ և յերկու թի:*

**Ելակետային դրությունը**—*գազահանող կոմանդան շարված է միատողան, կարմիր դրոշակների և* ВДП—1 *արանքում: Պաշտպանական հագուստը՝ մարտական դրությամբ,* ВДП—1 *ձախ թևի մոտ, վորը նշանակված է յերկրորդ կարմիր դրոշակով:*

*Ավազով լի տակառը տեղավորված է* ВДП—1-*ից ձախ, 5 մետրի վրա:*

> **Ծանոթություն**—*Պրիբորը կարող է ունենալ կատարելագործված հարմարանք՝ դատարկ ընթացքից աշխատանքային ընթացքի անցնելու համար և ընդհակառակը:*

**Վարժության կատարումը:** *Դատավորի հրամանով՝ «գազահանում սկսել» գործարկվում են վայրկենաչափերը: Կոմանդան սկսում է պրիբորը լցնել, մոտեցնելով այն ավազով լի տակառին:*

*Այնուհետև կոմանդայի առաջին համարը արձակում և յետ է գցում պրիբորի վերին կափարիչը. յերկրորդ և յերրորդ համարները լցնում են պրիբորը «քլորակրով» տակառից:*

*Պրիբորը լցնելուց հետո պետք է ծածկել նրա վերին կափարիչը և կոճկել մղլակը, իջեցնել վահանիկները, բարձրացնել և ամրացնել հենարանը: Դրանից հետո պրիբորը տանում է առաջին համարը, պրիբորը հրելով իր առջևում մինչև վարակված տեղամասը, վորը նշանակված է չորս դեղին դրոշակով:*

*Տեղամասը պետք է ունենա մակերես 70 մետր յերկարությամբ և 1,7 մ. լայնությամբ:*

*Պրիբորը լցնելու տեղից մինչև թՆ վարակված տեղամասը յեղած հեռավորությունը 25 մետր է:*



*Պրիբորը վարակված տեղամասին մոտեցնելուց հետո՝ առաջին համարը պատրաստում է պրիբորն աշխատանքի համար և հետո սկսում է գազահանումը:*

*Գազահանումը վերջացնելուց հետո՝ առաջին համարը վերադառնում է պրիբորի հետ լցնելու տեղը: Համրանքը կանգնում է միատողան պրիբորից աջ:*

**Վերջնական դրությունը.** *Համրանքի շարվելու մոմենտին վայրկենաչափը կանգնեցվում է:*

**Գնահատումը.** *«Գերազանց»—3 րոպե, «լավ»—4 րոպե, «բավարար»—5 րոպե:*

*Սխալների համար ժամանակն ավելացվում է.*

*1. 1 քառ. մետրի հավասար յուրաքանչյուր բաց թողած տեղի համար—30 վայրկյան.*

*2. վարակված վայրին մոտենալուց առաջ չվարակված տեղամասում ավազը շաղ տալու համար—30 վայրկյան.*

*3. վահանիկները չիջեցնելու համար—30 վայրկյան.*

*4. կոմանդայից մեկի կողմից հակագազը հանելու համար—30 վայրկյան:*

*Առաջնությունը տրվում է այն կոմանդային, վորն ամենալավ ժամանակ է ցույց տվել:*

ԽՍՀՄ Օսօավիաքիմի ԿԽ ՄՊՎ պետ՝ գնդապետ ՉԵԽԱՐԻՆ

ԿԽ ՄՊՎ կոմիսար՝ բրիգադային կոմիսար ԳԱՊՈՆՈՎ

ԿԽ ՄՊՎ ուսում-հրահանգային բաժնի պետ՝ մայոր ՎԱՍԻԼՅԵՎ

ՀՀ Ազգային գրադարան
NL0206955

114
41. 234